Վ. Լ. ԱՎԱԴՅԱՆ

ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920—1927 ԹԹ.)

Անցնելով նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ) կիրառմանը, կոմունիստական կուսակցությունը առաջնակարգ նշանակություն տվեց խոշոր արդյունաբերություն ստեղծելու խնդրին։ Խոշոր արդյունաբերության հիմնումը և սոցիալիզմի տնտեսական ամուր բազայի ստեղծումը գարձան կուսակցության ու բանվոր դասակարգի ամենաէական, ամենագրխավոր խնդիրները պատմական տվյալ ժամանակաշրջանում։ «Պրոլետարական դասակարգային ինքնագիտակցության զարգացման համար գրխավոր նյութական բազան խոշոր արդյունաբերությունն է,—գրում էր Լենինը,—երբ բանվորը տեսնում է աշխատող գործարանները, երբ նա ամեն օր զգում է այն ուժը, որն իսկապես կկարողանա ոչնչացնել դասակարգերը»[1]։ Վ. Ի. Լենինը ուստուցանում էր, որ բանվոր դասակարգի «Հիմնական ու սամենաէական շահը խոշոր արդյունաբերության և նրա մեջ տնտեսական ամուր բազայի վերաստեղծումն է, այն ժամանակ նա իր դիկտատուրան կամրապնդի, այն ժամանակ նա իր դիկտատուրան, հակառակ բոլոր քաղաքական ու ռազմական դժվարությունների, հաստատապես մինչև վերջը կհասցնի»[2]։ Բանվոր դասակարգի կողմից պետական իշխանությունը գրավելուց շատ չանցած Վ. Ի. Լենինը կուսակցության ողջ ուշադրությունը սրեց սոցիալիզմի տնտեսական հիմքի՝ խոշոր մեքենայական ինդուստրիայի ստեղծման կենսական հարցի վրա։ Կշտամբելով այն կոմունիստներին, որոնք, անտեսելով բանվոր դասակարգի պայքարի նպատակը, չէին կարողանում գնահատել խոշոր մեքենայական ինդուստրիայի տեղն ու դերը անդասակարգ սոցիալիստական հասարակարգ կառուցելու գործում, Վ. Ի. Լենինը ասում է. «Ես պետք է կրկին անգամ ընդգծեմ, որ սոցիալիզմի միակ հնարավոր տնտեսական հիմքը խոշոր մեքենայական ինդուստրիան է։ Նա, ով մոռանում է այդ, նա կոմունիստ չէ»[3]։

Այդ առումով էլ ժողովրդական տնտեսության վերականգնման սկզբին նոր տնտեսական քաղաքականությանն անցնելը միակ ճիշտ քաղաքականությունն էր, որ նախադրյալներ էր ստեղծում մեքենայական ինդուստրիայի ստեղծման համար։ Անհրաժեշտ էր ձեռնարկել արմատական միջոցներ զարգացնելու համար երկրի գյուղատնտեսությունը, տրանսպորտը, կապը և ժողտնտեսության մյուս բոլոր ճյուղերը անխտիր՝ ազգային բոլոր հանրապետություններում։ Այդ խնդիրների իրագործումը աներևակայելի ծանր էր։

Հայտնի է, որ Հայաստանը ցարական Ռուսաստանի հետամնաց ծայրամասային գաղութներից մեկն էր։ 1913 թ. Հայաստանի արդյունաբերության մեջ աշխատում էին ընդամենը 4956 բանվորներ, որոնցից 4.400-ը կենտ-

1 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 32, երևան, 1952, էջ 526։
2 Նույն տեղում, էջ 527։
3 Նույն տեղում, էջ 636։

ռոնացված էին Ղափանի և Ալավերդու պղնձահանքերում[4]։ Հայաստանում բացակայում էին ինչպես արդյունաբերության բազմաթիվ ճյուղեր, այնպես էլ քիմիական արդյունաբերություն։ Խոշոր արդյունաբերության համախառն արտադրանքը (1926—1927 թթ. անփոփոխ գներով) կազմում էր ընդամենը 15,5 միլիոն ռուբլի, որից պղնձի և պղնձահանքի հանույթի արժեքը կազմել է 9,2 միլիոն ռուբլի[5]։

Ալավերդու պղնձի հանքավայրերի ու ձուլարանի վերականգնման աշխատանքների կազմակերպման համար 1921 թ. մարտի տկզբին այնտեղ է ժամանում Հայաստանի կոմկոստակցության կողմից առանձնացված հանձնաժողովը, որը մոբիլիզացնում է կոմունիստների ու բանվորական ողջ կոլեկտիվի ուժերը։ Ամենից առաջ միջոցներ են ձեռնարկվում բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների նյութա-կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ։ Բանվորների համար կառուցվում են հանրակացարաններ, կարգավորվում է սննդի գործը, բացվում են բանվորական ճաշարաններ ու խանութներ։ Այնուհետև հարց է դրվում պղնձի արտադրությունը վերականգնելուն զուգընթաց կազմակերպել մի շարք նյութերի՝ կալցիում կարբիդի, ծծմբաթթվի, պղնձարջասպի, աղաթթվի, երկաթի և գլաուբերյան աղի արտադրությունը։

Կալցիում կարբիդի արտադրությունը, որը յուրացվեց 1921 թ. մայիսին, միանգամայն նոր բնագավառ էր ոչ միայն Սովետական Հայաստանի, այլև Անդրկովկասի համար։ Կարբիդի առաջին գործարանը կառուցվել է Ալավերդում դեռևս 1918 թ. ֆրանսիական կոնցեսիայի կողմից, որը օրական տալիս էր 20 փութ կարբիդ։ Գործարանը այդպիսի արտադրողականությամբ աշխատեց մինչև 1920 թ. վերջը։ Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո այդ փոքրիկ գործարանը վերակառուցվեց լեռնային ինժեներ Մելիք Հայկազյանի գլխավորությամբ և շուտով կարբիդի արտադրությունը հասցվեց 35 փթի[6]։ 1923 թ. կարբիդի արտադրությունը հասավ 5960 փթի, իսկ 1925 թ.՝ 8152 փթի։

1921 թ. հիմք դրվեց նաև ծծմբային կոլչեդանի արտադրությանը, որը 1921 թ. հասավ 101,2 փթի[7]։ 1922—1926 թթ. ընթացքում Ալավերդում ստացվել ու Բաքու է ուղարկվել ընդամենը 13,5 հազար տոննա ծծմբային կոլչեդան։ Վերոհիշյալից ստացված օգուտները ունեին ոչ միայն տեղական, այլև համապետական նշանակություն։

Մի շարք արժեքավոր արդյունաբերական նյութերի արտադրության և դրանց Անդրկովկասի քաղաքներում ու գյուղական վայրերում իրացման կազմակերպումը հնարավորություն տվեց, Հայաստանում սովետական իշխանության հաստատման առաջին իսկ ամիսներից, Ալավերդու ձեռնարկությունների բանվորներին բավարարել անհրաժեշտ աշխատանքով, աշխատավարձով և պարենով։

---

4 «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)», изд. УПХУ. Ереван, 1940, стр. 26.

5 Նույն տեղում։

6 Տե՛ս Հմ. Ռ. Մելիք-Աղամիրյանի անձնական արխիվը։

7 «Экономический вестник ССР Армении», Ереван, март-апрель, 1962, стр. 129.

Մասնավորապես պղնձարջասպը իրացվում էր Ալավերդու շրջանի գյուղերում, Բորչալուում և Կախեթում. այն օգտագործվում էր այգեպտղաբուծության մեջ՝ ծառերի ու խաղողի վազերի հիվանդությունները բուժելու համար, ընդ որում գյուղացիներից ստացված խաղողի, պտուղի և գյուղատնտեսական մյուս մթերքների մի մասը հանձնվում էր գործարանի և հանքերի ճաշարաններին՝ բանվորների հասարակական սննդի կազմակերպման համար։

Բաքու ուղարկված ծծմբային կոլչեդանի փոխարեն գործարանը ստանում էր նավթամթերքներ, որոնց մի մասը նույնպես փոխանակվում էր բանվորների համար անհրաժեշտ սննդամթերքներով[8]։ Հայաստանի կառավարությունը իր ամենօրյա ուշադրության կենտրոնում էր պահում բանվորների սպասարկման հարցը։

1922 թ. ԺողտնտԽորհի նախագահ Ս. Լուկաշինը պարենաժողկոմին գրում է. «Հայաստանի ժողտնտխորհի նախագահությունը իր մարտի 30-ի նիստում քննարկման առարկա դարձնելով Ալավերդու գործարանները կյանքի հրավիրելու խնդիրը և ի նկատի ունենալով մոտ 300 բանվորների պարենավորումը որոշեց. այդ գործարաններին ապահովել երեք ամսվա պարենով, տրամադրելով 1500 փութ ալյուր կամ հացահատիկ, 100 փութ աղ, 10 փութ թեյ, 25 փութ ծխախոտ, 20,000 արշին մանուֆակտուրա։

Ելնելով վերոհիշյալից, խնդրվում է կարգադրել՝ ի հաշիվ այդ նորմայի իսկույն ետ թող թողնել այդ մթերքից 100 փութ աղ, 1 փութ թեյ, 10 փութ ծխախոտ, 5000 արշին մանուֆակտուրա և 500 փութ ալյուր կամ ցորեն»[9]։

Ոգևորված կոսստակցության ու կառավարության ցուցաբերած հոգատարությունից, Ալավերդու պղնձաքիմիական ձեռնարկության բանվորները նոր եռանդով ձեռնամուխ եղան պետական առաջադրանքների կատարմանը։ Ժողովրդական տնտեսության խորհրդին ուղղված գրություններից մեկում Ալավերդուց հաղորդում էին, որ պլանից դուրս Երևան է ուղարկված 150 փութ կարբիդ և այլ տեսակի արտադրանք։ Գրության մեջ նշվում էր, որ բանվորական կոլեկտիվը լի է վճռականությամբ կատարելու կառավարության ամեն մի հանձնարարություն[10]։

Ղեկավարվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, ՀԿԿ Կենտկոմը Ալավերդում և հանրապետության մյուս վայրերում եղած արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական կարողությունների ավելացման հարցը 1921—1925 թթ. բազմաթիվ անգամ քննարկման առարկա դարձրեց ՀԿԿ Կենտկոմում և հանրապետության պետական բարձրագույն օրգաններում։ Ժողովրդական տնտեսության զարգացման ուղղությամբ գործնական մի շարք արդիական միջոցառումներ ևս ձեռնարկվեցին։ Այսպես, ՀԿԿ Կենտկոմի 1922 թ. սեպտեմբերի 8—11-ը տեղի ունեցած պլենումը իր որոշման մեջ նշեց, որ «Սահմանափակ թվով խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների (Ալավերդի, Կոշարդ, «Արարատ», «Մեխգործարան») պահպանումն ու հետագա զարգացումը առաջ-

---

8 Վ. Մ. Մելքոնյան, Պղնձի ձուլման գործի զարգացումը Հայաստանում, ՀՍՍՀ պետական գիտա-տեխնիկական հրատարակչություն, Երևան, 1960, էջ 96—98։

9 ՀՍՍՀ ՀԱՍՇՊԿԱ, ֆ. 115, ց. 1, գ. 4, թ. 92։

10 Նույն տեղում, թ. 61։

նահերթ խնգիր է։ Խորհրդային ապարատը բացառիկ ուշադրություն պետք է դարձնի այդ ձեռնարկությունների վրա»[11]։

Սկսած 1922 թ. վերջերից Հայաստանի կոմկուսակցությունն ու կառավարությունը սկսեցին հատուկ ուշադրություն դարձնել քիմիական նյութերի արտադրությանը և ընդլայնմանը, այդ խնդրի վրա կենտրոնացնելով առաջին հերթին Լոռի-Փամբակի գավառի կուսակցական կազմակերպությունների ու բանվորների ուշադրությունը։ Քիմիական նյութերի արտադրությունը ընդլայնելու անհրաժեշտության մասին այդ ժամանակ «Խորհրդային Հայաստան» թերթը գրում էր, որ Ալավերդու գործարանը պղնձի արտադրությանը զուգընթաց այսուհետև պետք է մեծ չափերով ընդլայնի քիմիական նյութերի արտադրությունը, որի պահանջը մեծ էր ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։ Ժողովրդական տնտեսության համար առանձնապես մեծ կարևորություն ունեն քիմիական այնպիսի նյութեր, ինչպիսիք են աղային թթվուտը, կարբիդը, ծծմբային կոլչեդանը[12]։

Ելնելով դրանց ունեցած մեծ նշանակությունից, Հայաստանի կոմկուսակցության Կենտկոմը և Ալավերդու շրջանային կուսակցական կազմակերպությունները մոբիլիզացրին կոմունիստների ու բոլոր բանվորների ուժերը վերոհիշյալ քիմիական նյութերի արտադրանքը ավելացնելու ուղղությամբ։ Այդ բանի շնորհիվ գործարանը «երկուսկես ամսվա ընթացքում արտադրեց 900 փութ կարբիդ, 800 փութ պղնձի կուպարոս, 22 հազար փութ ծծմբային կոլչեդան՝ չորս ամսվա ընթացքում 3,500 փութ ծծմբաթթու՝ երեք ամսվա ընթացքում»[13]։

Ոգևորված ձեռք բերված հաջողություններով բանվորները ջերմորեն ընդունեցին կոմկուսակցության ու պետության կողմից իջեցրած պլանը, ըստ որի պետք է արտադրեին «200 հազար փութ ծծմբի կոլչեդան, 13 հազար փութ ծծմբաթթու, 2400 փութ կարբիդ, 4 հազար փութ պղնձի կուպարոս, 3 հազար փութ քլորաթթու, 30 հազար փութ կիր»[14]։ Կարված պայքարի շնորհիվ բանվորները ծծմբաթթվի 1922 թվականի ինն ամսվա արտադրական ծրագիրը իրագործեցին 110,5 տոկոսով[15]։

Հայաստանի կուսակցական կազմակերպությունները քիմիական նյութերի արտադրության ավելացումը ինքնանպատակ չէին համարում, այլ դրանք կապում էին մեր երկրի գյուղատնտեսության զարգացման, գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման հարցերի հետ։

1922 թ. նոյեմբերի 15-ին տեղի ունեցավ Հայաստանի առաջին գյուղատնտեսական համագումարը։ Այստեղ բարձրացվեցին գյուղատնտեսության զարգացման բազմաթիվ հարցեր, այդ թվում նաև գյուղատնտեսության քիմիացման հարցը։ Համագումարը որոշում ընդունեց հանրապետությունում ստեղծել մի շարք քիմիական փորձնական կայաններ ու լաբորատորիաներ, որոնք պետք է գյուղացիությանը առավորեցնեին քիմիական պարարտանյութերի

---

11 ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 1, գ. 234, ց. 1, թ. 39։ (Այսուհետև՝ ՍՄԿԿ ԿԿ կից Մլի-ի ՀՖՊԱ)։

12 Ս. Լուկաշինի պատասխան խոսքը խորհուրդների համահայկական 2-րդ համագումարում, «Խորհրդային Հայաստան», 5 դեկտեմբերի, 1922։

13 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 4 հոկտեմբերի, 1922։

14 Նույն տեղում։

15 ՍՄԿԿ ԿԿ կից Մլի-ի ՀՖՊԱ, ֆ. 1, ցուցակ 1, գ. 330, թ. 1։

գործածությունը։ Համագումարի նյութերում կարդում ենք. «...պետք է մանրամասնորեն ուսումնասիրվեն այն բոլոր հողերը, որոնց առաջմանը ձեռնամուխ ենք լինում։ Իսկ այդպիսի աշխատանք կարող է կատարել միմիայն գյուղատնտեսական կայանը՝ հանձինս յուր հողագիտական-քիմիական լաբորատորիայի։ Քիմիական բաժինը պետք է զբաղվի նաև մեր գյուղատնտեսության արտադրությունների ուսումնասիրությամբ...»[16]։

Համագումարից հետո լույս տեսնող «Գյուղատնտեսական կյանք» ամսագիրը, որը դառնում է Հայաստանի գյուղացու խորհրդատուն, իր էջերում հետևողականորեն լուսաբանում էր գյուղատնտեսության քիմիացման հարցերը։ Այսպես՝ գյուղատնտեսության քիմիացման խնդիրը հատկապես առաջ էր քաշում ծծմբաթթվի արտադրության ընդլայնման պահանջը։ Ծծմբաթթու պատրաստելու համար, բացի պղնձարջասպից, Հայաստանն ուներ մի այլ հումք՝ ծծմբային կոլչեդան։ Դրա հանքավայրերը գտնվում էին Ալավերդում, Տանձուտում (Ղարաքիլիսայի շրջան), Ջիրոսխրոսում (Ստեփանավանի շրջան)։ Հայտնի երկրաբան Հ. Կարապետյանի հաշվարկներով, այդ արժեքավոր քիմիական հումքի պաշարը, որի շահագործումն տեսվել էր 1916 թվականին՝ Ալավերդում հասնում էր ներքին շերտերում 250 հազար, իսկ վերին շերտերում՝ 1,690 հազար տոննայի։

Հայաստանում ծծմբաթթվի տպառողները պետք է լինեին պղնձարջասպի, ֆոսֆորային պարարտանյութերի, արհեստական մետաքսի և այլ գործարանները, Բաքվում՝ նավթավերամշակման ձեռնարկությունները, Քութայիսում՝ լիթոսրոնի գործարանը։

Սկսած 1922 թ. ծծմբաթթվի արտադրության համար ավելի լայն մասշտաբներով տեսվեց օգտագործվել պղնձարջասպը, որը ստացվում էր Ալավերդու պղնձաձուլական գործարանում։

Վերականգնման շրջանում յուրաքանչյուր 100 ռուբլու արժողությամբ ներմուծվող պղնձարջասպի մեջ մենք ստիպված էինք վճարում ոչ միայն նրա բաղադրության մեջ մտնող 25,4 տոննա պղնձի, այլև 38,5 տոննա ծծմբական թթվի համար։ Այն դեպքում, երբ այդ ծծմբական թթուն կարելի էր ստանալ տեղում պղնձարդյունաբերության թափուկների օգտագործման միջոցով, էլ ավելի ցածր ինքնարժեքով, քան նույնիսկ ստացվում էր Անգլիայում[17]։

Սկսած 1924 թ. Ալավերդու արդյունաբերությունը մեծ չափով ավելացրեց քիմիական նյութերի՝ պղնձարջասպի, թունաքիմիկատների և առանձնապես ծծմբաթթվի արտադրությունը։ Վերականգնման շրջանի վերջին՝ 1926 թ. Ալավերդին երկրին տվեց հանած և լվացած ծծմբաքար՝ 349.027 փութ, կարբիդ՝ 25.508 փութ[18]։

Արտադրության ավելացման համար ստանձնած պարտավորություններից մեկում Ալավերդու գործարանի կոլեկտիվը հավաստիացնում էր Հայաստանի կոմկուսակցությանը, որ ամեն ինչ կանեն առաջիկա մեկ-երկու տարում կրկնապատկելու կարբիդի և ծծմբաթթվի արտադրությունը, որոնց կարիքը խիստ

---

16 Տե՛ս «Գյուղատնտեսական կյանք», № 1, նոյեմբերի 15, 1922, օրգան՝ ՀՍԽՀ հողագործության ժողովրդական կոմիսարիատի և բամբակագործության կոմիտեի։

17 ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 130, ց. 4, գ. 400, թ. 17։

18 «ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր, մարտ 1925 թ., հունվար 1927 թ., Երևան, 1927, էջ 21։

մեծանալու էր Անդրկովկասում՝ քիմիական նոր ձեռնարկությունների շինարարության կապակցությամբ։

Հայաստանի կոմկոսակցությունը քիմիական արդյունաբերության մեջ էր ներգրավում հանրապետության խոշոր մասնագետներին։ 1922 թ. Հայաստանի ժողտնտխորհին կից ստեղծվում է տեխնիկական բաժին, որի վարիչ է նշանակվում ակադեմիկոս Ա. Ի. Թամանյանը[19]։ Այս բաժնում աշխատում էին փորձառու ինժեներ, քիմիկոս Գրիգոր Գուրգենյանը, որը Ժողտնտխորհի առաջին նախագահ Ս. Լ. Լուկաշինի հանձնարարությամբ մի շարք տուրջ ուսումնասիրություններ է կատարել ժամանակակից քիմիական արդյունաբերություն ստեղծելու համար։ Ս. Լուկաշինի և Ալ. Թամանյանի խնդրանքով Գուրգենյանը 1923 թ. մի շարք նամակներ է գրում արտասահմանում գտնվող իր ընկերներին, նրանցից պահանջելով քիմիային վերաբերող նյութեր և գրականություն։ Արխիվներում պահպանվել են արտասահման ուղարկած նրա նամակներից ու ստացված պատասխաններից մի քանիսը։ Ուղարկված նամակներից մեկում՝ օգոստոսի 8-ին, Բեռլինում գտնվող ինժեներ Ա. Ն. Շխիանին նա գրում է.

«Հարգելի Իոսիֆ, Հայաստանի տեխնիկական ընկերության ս. թ. հունիսի 16-ի նիստում զեկուցում կարդացի էլեկտրական էներգիայի միջոցով այսպես կոչված ազոտային պարարտանյութեր արտադրելու՝ մթնոլորտային ազոտի ուտիլիզացիայի մասին։ Նկատի ունենալով Հայաստանի խիստ հողասակավությունը, բերքատվությունը բարձրացնելու նպատակով պարարտացում կիրառելու հարցը մեր գյուղատնտեսության համար ունի առաջնակարգ նշանակություն։ Այդ հարցը մանրամասնորեն ու բազմակողմանիորեն ուսումնասիրելու համար Հայաստանի տեխնիկական ընկերությունն իր միջից ընտրել է հատուկ հանձնաժողով, որը ինձ հանձնարարել է հավաքել այդ հարցի համար բոլոր անհրաժեշտ նյութերն ու տվյալները։ Եվ ահա մեր մայր Հայաստանի շահերից ելնելով, դիմում եմ քեզ և խնդրում անհրաժեշտ տեղեկություններ հավաքել»[20]։

Գրագրությունները շարունակվում են հետագայում ևս։ 1925 թ. Գ. Գուրգենյանի և Ս. Լուկաշինի ստորագրությամբ գրություններ են ուղարկվում Թիֆլիսում գտնվող գերմանական մասնագետներ, ինժեներներ Բ. Շաֆգաուզերին. Կարլ Բալկին և նրանց միջոցով պրոֆեսոր Լյուդինին, որը գտնվում էր Բեռլինում[21]։

Ալ. Թամանյանի գլխավորած տեխնիկական բաժինը 1923 թ. մի նախագիծ է ներկայացնում Ժողկոմսովետի քննարկմանը։ Նախագծում նշվում էր, որ ազոտային պարարտանյութերի (այդ թվում ցիանամիդի) արտադրության համար Հայաստանն ունի մեծ հնարավորություններ։ Տեխնիկական բաժինը, դրանից ելնելով, Ժողկոմսովետին էր ներկայացնում արդյունաբերական շինարարության 3 ծրագիր, երեք տարբեր վարիանտներով։ Ծրագրերից մեկը վերաբերում էր ազոտային պարարտանյութերի, ուրեմն և ցիանամիդի արտադրության ռեալ հնարավորություններին Հայաստանում։

Հիշյալ ծրագրերին կցած գրությունը կրում է Ս. Լուկաշինի հետևյալ մակագրությունը. «Բաց անել վարկ՝ խնդրած սահմաններում. երեք հարցերն

---

19 ЦГАОРСС Арм. ССР, ф. 130, оп. 4, д. 384, лл. 1—2.
20 ЦГАОРСС Арм. ССР, ф. 113, оп. 4, д. 384, лл. 1—2.
21 Նույն տեղում։

էլ համարել հերթական պրակտիկ լուծման առարկա և շտապ կերպով նախապատրաստական աշխատանքներ կատարել այն պայմանով, որ աշնանը և ձմեռը մենք կարողանանք ունենալ գործնական ծրագիր»[22]։

1926 թ. հոկտեմբերի 3-ին Հայաստանի պետպլանի պլենումը լսելով ճարտարապետ Անգրեևի զեկուցումը Զորագեսի էլեկտրակայանի մասին, ընդունում է հետևյալ որոշումը. «անհրաժեշտ համարել Զորագեսում կառուցվելիք ջրաէլեկտրակայանի էներգիան գործադրել առաջին հերթին և գլխավորապես Հայաստանի ապագա էլեկտրաքիմիական արդյունաբերության ուժ հայթայթելու համար»[23]։

Նույն ամսին ՀՍՍՀ ժողկոմսովետում Ս. Համբարձումյանի նախագահությամբ տեղի է ունենում մի հատուկ խորհրդակցություն, որտեղ մասնագետներին առաջարկվում է բացատրագրեր և տնտեսական հիմնավորումներ ներկայացնել էլեկտրաքիմիական արդյունաբերության այնպիսի ճյուղերի մասին, որոնք կարող են ստեղծվել և զարգանալ Զորագեսի հիդրոէլեկտրակայանի արտադրած էներգիայի բազայի վրա։ Խորհրդակցությունից որոշ ժամանակ անց Հայաստանի կառավարությունը առաջարկում է քիմիկոսներ՝ պրոֆեսոր Լ. Ռոտինյանին, Հմ. Ռ. Մելիք-Ադամիրյանին, Տիրվարտյանին, Գ. Գուրդենյանին, ուսումնասիրել և կարծիք ներկայացնել Հայաստանում, ցիանամիդի գործարանի կառուցման նպատակահարմարության մասին։

Սակայն քիմիական արդյունաբերության ստեղծման համար անհրաժեշտ էր ունենալ քիմիայի մասնագետների ու տեխնիկական աշխատողների կադրեր։

Այդ պրոբլեմի կենսագործման դժվարին ճանապարհին Հայաստանի կառավարությունը որոշակի քայլեր էր անում։ Նախ և առաջ հանրապետություն հրավիրվեցին երկրի ուրիշ վայրերում աշխատող մի քանի անվանի քիմիկոս ինժեներներ ու տեխնիկներ։ Սակայն դա չէր կարող բավարարել նախատեսվող մեծ ծրագրի իրականացումը, որը վերականգնման ժամանակաշրջանի լուրջ դժվարություններից էր և հանդիսանում էր ինդուստրացման քաղաքականության գլխավոր խնդիրներից մեկը։

Վերականգնման շրջանի վերջին երկու տարում որոշ աշխատանքներ ծավալվեցին սննդարարական քիմիայի՝ ձիթայուղերի, մարգարինի, օճառի և գլիցերինի արտադրության կազմակերպման ու զարգացման ուղղությամբ։ Ժողովրդական տնտեսության համար կարևոր նշանակություն ստացավ հատկապես Երևանի ձեթ-օճառի գործարանը, որի շինարարությունը 1926 թ. մոտենում էր իր ավարտին։ Այդ տարիներին կուսակցության ու կառավարության հետաքրքրությունը ակտիվանում էր քիմիական արդյունաբերության ստեղծման ուղղությամբ. որոշ նյութական նախադրյալների առկայությունը կուսակցությանը մղում էր գործնական քայլերի։ Այսպես, օրինակ, եթե քիմիական արդյունաբերության ստեղծման նպատակների համար կապիտալ ներդրումները 1923—1924 թթ. կազմում էին 900 հազար ռուբլի, ապա 1924—1925 թթ. դրանք հասան մեկ միլիոն 774 հազար ռուբլու[24]։ Եթե ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանում Հայաստանում արտադրած քիմիական նյութերն հիմնականում նախատեսվում էին տեղական սպառման համար, ապա

22 «Խորհրդային Հայաստան», № 122 (1788), 29 մայիսի, 1927։

23 Տե՛ս նույն տեղում։

24 Խ. Հովսեփյան, Պայքարի և շինարարության տասը տարին, Երևան, 1930, էջ 11։

25 «Խորհրդային Հայաստան», 3 օգոստոսի, 1924։

ինդուստրացման ծրագիրը նախատեսում էր այդ նյութերը մատակարարել նաև հարևան հանրապետությունների կարիքների համար։

Ինչպես ողջ ՍՍՀՄ-ում, այնպես էլ Հայաստանում քիմիական նյութերի արտադրության ընդլայնումը, տվյալ ժամանակաշրջանում, հիմնականում անհրաժեշտ էր երեք պատճառով.

1. Քիմիական նյութերի արտադրության ծավալումը տվյալ ժամանակաշրջանում խիստ անհրաժեշտ էր հանրապետության բնակչության կենցաղային ու սննդարարական կարիքների բավարարման և հատկապես նավթարդյունաբերության մեջ օգտագործելու համար։

2. Գյուղատնտեսության վերականգնման շրջանում գյուղացիությունը դեռևս չուներ այն հնարավորությունները, որ կարողանար ցանքի տակ դնել բերքատու հողային բոլոր տարածությունները. նա հեղած հնարավորություններով կարողացավ ցանովի դարձնել հողային տարածությունների մի զգալի մասը՝ հասներով ցանքատարածությունների ընդարձակման նախապատերազմյան մակարդակին։ Այժմ անհրաժեշտ էր անցնել ինտենսիվ հողագործությանը։ Իսկ դա կարելի էր իրականացնել եղած հողատարածությունների բերքատվության բարձրացման միջոցով։ Վերջինս պահանջում էր գյուղատնտեսության վնասատուների դեմ ակտիվ քիմիական պայքար մղելուն զուգընթաց սկսել հողը քիմիական պարարտացման ենթարկելու լայն աշխատանքները։

3. Իրագործելով խաղաղ սոցիալիստական շինարարության լենինյան պլանը, կոմսակցությունը, սակայն, երբեք չէր մոռանում երկրի պաշտպանունակության ամրապնդման հարցերը։ Այդ ժամանակաշրջանում Արևմուտքում իմպերիալիստները կատարելագործում էին քիմիական զենքը, քիմիան ծառայեցնում նոր պատերազմի նախապատրաստման նպատակին։

Ի պատասխան դրան, սովետական երկրով մեկ ծավալվեց մասսաների ռազմական և մասնավորապես քիմիական ուսուցումը։ Այդ նպատակով Հայաստանի կոմկուսակցությունը նույնպես հանրապետության բանվոր դասակարգի ու ողջ աշխատավորների ուշադրությունը հրավիրում էր ոչ միայն քիմիական արդյունաբերության ստեղծման հարցերի վրա, այլև կոչ էր անում ամեն կերպ յուրացնել քիմիական զենքից պաշտպանվելու միջոցները։ «Խորհրդային Հայաստան» թերթի 1924 թ. օգոստոսի 3-ի համարի ամբողջ առաջին էջը նվիրված էր քիմիային։ Էջը բացվում էր «Քիմիան ԽՍՀՄ աշխատավորության նվաճումների պաշտպանության և մեր արդյունաբերության զարգացման համար, այս պիտի լինի օրվա լոզունգը» վերնագրով[25]։

Բայց քիմիական փոքրիկ, հնամենի «ձեռնարկություններով» չէր կարելի ծավալել սոցիալիզմի կառուցման աշխատանքները։ Հայաստանի կոմկուսակցությունը հանրապետության ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի և աշխատավորների նյութական-կուլտուրական մակարդակի հետագա վերելքի նախադրյալները տեսնում էր ծանր ինդուստրիայի այն ճյուղերի մեջ, որոնց զարգացման համար Հայաստանում կային նյութա-տնտեսական առավել նպաստավոր պայմաններ։

Այդպիսի առաջավոր ճյուղերից մեկը, Հայաստանի կոմկուսակցությունը համարեց քիմիական արդյունաբերությունը, որի զարգացման հարցերը ին-

---

26 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 29 նոյեմբերի, 1926։

դոստրացման քաղաքականության հենց սկզբից սկսեց պահել իր ուշադրության կենտրոնում։

Ձեթ-օճառի գործարանի շինարարությունը, որի աշխատանքները սկսվել էին 1924 թ. սեպտեմբերին, ավարտվեց ժամկետից շուտ և շահագործման հանձնվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման վեցերորդ տարեդարձի օրը՝ 1926 թ. նոյեմբերի 29-ին։

Խոսելով ձեթ-օճառի գործարանի հեռանկարների մասին իր «Մի նոր նվաճում ևս յոթերորդ տարվա շեմքին» խորագիրը կրող հոդվածում հայտնի քիմիկոս ինժեներ Հ. Ռ. Աղամիրյանը գրում էր. «Գործարանի աշխատանքը չի սահմանափակվելու վերոհիշյալ նյութերի արտադրությամբ, այլ զարգանալու է երկու ուղղությամբ, մեկ ուղղությունը տանում է դեպի զուտ քիմիական արդյունաբերություն, ինչպես գլիցերին, օլիֆ, օճառ, օծելու յուղ. մյուս գիծը, որը մեր պայմաններում ավելի կարևոր նշանակություն կունենա, այդ քիմիական ուղղությունն է, ուղղություն, որը կարող է մեր երկրում դնել էլեկտրա-քիմիական արդյունաբերության հիմքը»[26]։

Սննդարարական քիմիայի օջախների ստեղծման հետ մեկտեղ հանրապետության բանվոր դատակարգը շարունակում էր առաջ տանել քիմիական նյութերի մյուս տեսակների և հատկապես ծծմբաթթվի արտադրության հետագա ավելացման գործը։ Ծծմբային կոլչեդանի արտադրության ավելացմամբ ոգևորված բանվորների ամենօրյա աշխատանքն էլ ավելի արտադրողական էր դարձնում Շամլուղի հանքերի կոսսակցական կազմակերպությունը։ 1926 թ. մարտ ամսի հաշվետվություններից մեկում հաղորդվում էր. «Ծծմբային կոլչեդանի արտադրությունը, որը սկսվել է 1925 թ. հոկտեմբերից, շարունակվում է։ Այդ արտադրությունը սկզբնական ամիսներում հասնում էր մինչև 10 հազար փթի (ամսական), իսկ այժմ նրա արտադրությունը ավելացել է և հունվարին կազմել 14 հազար 605 փութ։ Արտադրած ծծմբային կոլչեդանը ուղարկվում է Ազնեֆտին։ Հունվարին ուղարկված է 9000 փութ, փետրվարին՝ 13.000 փութ։

Շամլուղի հանքերում վերականգնման աշխատանքներն ընթանում են ավելի մեծ թափով, քան Ալավերդու հանքերում[27]։ Ալավերդու հանքագործ բանվորներին մշտական օգնություն էր ցույց տալիս Սանահինի երկաթուղային կայարանի կոսսակցական կազմակերպությունը։ Ալավերդու բանվորների մեջ քաղաքական-մասսայական աշխատանքներն ուժեղացնելու նպատակով նա այնտեղ է գործուղում կոմբջջի քարտուղարին[28]։

Կուսակցական կազմակերպությունների քաղաքական ու կազմակերպչական աշխատանքի շնորհիվ զգալիորեն ավելացավ Ալավերդու կիտագործարանային, սովորական եղանակներով արտադրվող քիմիական նյութերի արտադրանքը։ Այսպես, Շամլուղի հանքամասում օրական արտադրվում էր 2300 փութ ծծմրաթթու, որն ուղարկվում էր Բաքու և Ռոստովտան. Լենինյան հանքերում՝ 3000 փութ, Ախթալայում՝ 500, Սիսիմատանում՝ 800 փութ։ Կարբիդի գործարանն ամսական տալիս էր 1500—1800 փութ կարբիդ։ Հանքերում աշխատում էին մոտ 900 բանվոր, իսկ գործարաններում՝ 300 բանվոր[29]։ Ընդ-

---

27 ՍՄԿԿ ԿԿ-ին կից ՄԼԻ-ի ՀՖՊԱ, ֆ. 1, գ. 215, ց. 7, թ. 1։

28 Նույն տեղում, ց. 5, դ. 125, կոմբջջի արձ., 6։

29 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 24 սեպտեմբերի, 1926։

հանուր առնամբ ժողովրդական տնտեսության վերականգնման վերջին տարիներում (1925—1927 թթ.) հանած և լվացած ծծմբաքարը կազմում էր 349027 փութ, իսկ կարբիդ էր մշակված 2550 փութ[30]։ Ինչ խոսք, որ էլեկտրաէներգիայի պակասության հետևանքով կարբիդի արտադրությունը հնարավոր չէր ընդլայնել մեծ մասշտաբներով։ Սկսած 1925 թ. վերջերից մեր երկրում հատկապես մեծ պահանջ զգացվեց ավելացնել կարբիդի արտադրությունը։

Հայկական ՍՍՀ ժողտնտխորհի նախագահությունը 1926 թ. մայիսի 26-ին նիստում քննարկելով Երևանում կարբիդի արտադրություն կազմակերպելու մասին հարցը, ընդունված որոշման մեջ նշում է. «Հաստատել Արդպլանի արձանագրության 1-ին կետը, որոշելով կարբիդի գործարանի կառուցման և սարքավորման արժեքը 1925/26, 1926/27 տարիներում 328.000 ռուբլի գումարով։ Առաջարկել Արդբաժնին կարբիդի գործարանի կառուցման 1925—1926 թթ. նախահաշիվը 120.000 ռ. սահմաններում, կրճատ արտադրությունով»[31]։ Նույն թվականի սեպտեմբերին կազմվեց 3 անվանի ինժեներներից բաղկացած մի հանձնաժողով՝ կարբիդի գործարանի նախագիծը կազմելու համար[32]։

Նախագծվող կարբիդի գործարանի տարեկան արտադրանքը պետք է կազմի 60 հազար փութ, կամ ամսական 500 փութ։ Գործարանը էլեկտրաէներգիան պետք է ստանար Երևանի հիդրոէլեկտրակայանից[33]։

Գործարանի կառուցումը սկսվեց 1926 թ. աշնանից[34]։ Առաջին հիմնաքարի դնումը արտակարգ խանդավառություն առաջացրեց շինարար բանվորների մեջ։ Նրանք իրենց անդուլ աշխատանքով ընդամենը չորսկեսս ամսվա ընթացքում ավարտեցին գործարանի կառուցման և մոնտաժման աշխատանքները։ 1927 թ. մարտի 10-ին կատարեցին նախնական փորձարկումը, որն անցավ շատ հաջող։ Առաջին իսկ օրից գործարանի արտադրողականությունը զարմացուցիչ էր։ Այնտեղ ստացվում էր օրական 130 փութ կարբիդ։ Ձեռնարկությունում, որտեղ աշխատում էր ընդամենը 35 բանվոր, անցել էին երեքսերթ աշխատանքի։ Հատկանշական է այն, որ գործարանի սարքավորումներն ամբողջովին պատրաստված էին Հայաստանում։ Արտադրված կարբիդը ուղարկվում էր միութենական կենտրոնական քաղաքների ձեռնարկություններին։ «Այս գարնանամուտը մի թանկագին նվաճում բերեց ոչ միայն Հայաստանի, այլև խորհրդային Միության արդյունաբերության համար,—գրում էր կարբիդի գործարանի բանվորներից մեկը։— Սկսեց աշխատել մեր երկրի առաջին կարբիդի գործարանը։ Նրա արտադրանքը կոչված էր փոխարինելու մինչև այժմ արտասահմանից ստացվող կարբիդին։ Բանվորների եռանդուն աշխատանքի շնորհիվ գործարանը առաջին տարում արտադրեց 780 տոննա (4750 փ.) կարբիդ[35]։ Ջբավարարվելով դրանով նրանք պարտավորվեցին հետագայում գործարանի արտադրանքը 60 հազարից հասցնել 100 հազար փթի[36]։

Հայաստանի կարբիդագործ բանվորների ծառայություններն առանձնապես նշանակալի են հանրապետությունում մեծ քիմիայի ստեղծման գործում։

30 Տե՛ս «ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութերը (1925—1927 թթ.)», Երևան, 1927, էջ 21։

31 ՀՍՍՀ ՀԱՍՇՊԿԱ, ֆ. 115, ց. 1, գ. 538, թ. 103։

32 Նույն տեղում, գ. 1045, թ. 102։

33 Նույն տեղում, ֆ. 187, ց. 1, գ. 24, թ. 10, 2։

34 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 3 ապրիլի, 1927։

35 «Հայաստանի քիմիական արդյունաբերությունը 5 տարում», էջ 4—5։

36 «Խորհրդային Հայաստան», 3 ապրիլի, 1927։

Իր գործարկումից հետո էլ կարբիդի գործարանը անընդհատ գտնվում էր հանրապետության կուսակցական և սովետական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում։ ՀՍՍՌ Ժողտնտխորհի նախագահությունը 1927 թ. մարտի 14-ին նորից է քննարկում կարբիդի գործարանի հարցը։ Ընդունված որոշման մեջ նշվում է, որ գործարանը պետք է անցնի 24 ժամյա աշխատանքի։ Այդ նպատակով ձեռնարկվում են մի շարք կոնկրետ միջոցներ։ Մասնավորապես ավելացվում է հաշվային աշխատողների թիվը, տրվում է տեխնիկական ղեկավարի նոր հաստիք, միջոցներ են բաց թողնվում գործարանի տերիտորիան բարեկարգելու, բանվորների աշխատանքային հիգիենայի պայմանները բարելավելու համար[37]։ 4 ամիս հետո՝ 1927 թ. հուլիսի 29-ին Ժողտնտխորհը երրորդ անգամ է անդրադառնում այդ հարցին, իր նիստում քննարկում ու հաստատում «Կալցիում կարբիդի գործարանի կանոնադրության նախագիծը»[38]։

1927 թ. շահագործման հանձնված Երևանի կարբիդի գործարանով հիմնադրվեց հանրապետության քիմիական արդյունաբերությունը։ Քիմիական ինդուստրիայի ստեղծման ճանապարհին այն պետք է համարել ամենախոշոր նվաճումներից մեկը։ Այդ ժամանակ Երևանի կարբիդի գործարանը ՍՍՀՄ-ում կարբիդի արտադրության երկրորդ ձեռնարկությունն էր հանդիսանում։

В. Л. АВАКЯН

СОЗДАНИЕ ХИМИЧЕСКОЙ ПРОМЫШЛЕННОСТИ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ (1920—1927 гг.)

Резюме

До установления Советской власти в Армении имелось несколько мелких промышленных предприятий, а химическая промышленность вовсе не существовала. После установления Советской власти в Армении под руководством Компартии и с помощью Советской России рабочему классу и трудящимся республики пришлось в упорном труде восстанавливать народное хозяйство. Уже в конце 1922 г. в Армении действовали 896 мелких предприятий промыслового типа с 2765 рабочими и служащими. По неполным данным валовая продукция промышленности в декабре 1922 года выражалась в размере 230 тысяч рублей золотом.

Детище Советской власти — химическая промышленность возникла на базе богатейших запасов сырья, ресурсов дешевой гидроэнергии и промышленных отходов цветной металлургии.

С введением в действие первого Ереванского карбидного завода и было положено начало развитию химической промышленности Армении.

Под руководством Компартии Армении, параллельно с реконструкцией всех отраслей народного хозяйства, были сделаны первые шаги по индустриализации страны; составляется пятилетний план развития химической промышленности республики на базе развития тяжелой индустрии.

37 ՀՍՍՌ ՀՊՏԱ, ֆ. 115, ց. 1, գ. 583, թ. 125։

38 Նույն տեղում, ֆ. 115, ց. 1, գ. 395, թ. 56։